ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1784 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննության առնելով «2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի հունիսի 17-ին ընդունել է ՍԴՈ-1784 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ Որոշման վերաբերյալ հատուկ (համընկնող) կարծիք՝ ներքոհիշյալ հիմնավորմամբ:

Սահմանադրահիրավական վեճն ունի այն բովանդակությունը, թե արդյոք Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներին:

Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության մասով հարկ եմ համարում ընդգծել, որ դրանց սահմանադրաչափության հիմնական չափանիշ եմ դիտարկում Սահմանադրության 13-րդ հոդվածով նախատեսված՝ արտաքին քաղաքականության փոխշահավետության սկզբունքը:

Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Վերոգրյալի լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրվել են Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների գործունեության հետևյալ հիմնարար սկզբունքները՝ արտաքին քաղաքականության բարիդրացիականություն, այլ պետությունների հետ հարաբերությունների փոխշահավետություն և միջազգային իրավունքի նորմերով կանոնակարգվածություն:

Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 13-րդ և 1-ին հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտ, իրավասու պետական մարմինների կողմից իրացվում է Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ պետության բնույթը կանխորոշող սկզբունքների հիման վրա և միջպետական հարաբերություններում այդ սկզբունքների հետևողական կենսագործման նպատակով:

Արտաքին քաղաքականության ոլորտում իրավունքի գերակայությունն ընդգծելու համար Սահմանադիրը կանխորոշել է արտաքին քաղաքականության ուղենշվածությունը միջազգային իրավունքի նորմերով, ինչը մի կողմից՝ նշանակում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև հարաբերությունների կառուցում փոխադարձ իրավական պարտավորությունների հիման վրա, իսկ մյուս կողմից՝ միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվելիք պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին: Միևնույն ժամանակ, արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը սահմանադրորեն Կառավարության լիազորություններն են, ինչը ենթադրում է պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, զարգացման, համագործակցության ոլորտների ընտրու-

թյան, արտաքին քաղաքականության գերակայությունների սահմանման, միջազգային կազմակերպություններին անդամակցության քաղաքական նպատակահարմարության և բովանդակային ուղղությունների որոշման՝ Կառավարության բացառիկ իրավասություն: Վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության քննությունը պետք է սահմանափակվի հետևյալ հարցադրմանը համահավաք պատասխան տալով. արդյո՞ք տվյալ միջազգային պայմանագրով սահմանված պարտավորություններն առերևույթ համապատասխանում են բարիդրացիականության և փոխշահավետության սահմանադրական սկզբունքներին:

Անդրադառնալով Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության չափանիշների կիրառման առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվելիք միջազգային իրավական պարտավորությունների սահմանադրաչափության նշյալ չափանիշներից ֆինանսական բնույթի միջազգային պայմանագրերի դեպքում, ինչպիսին է Համաձայնագիրը, առարկայական նշանակություն ունի փոխշահավետության սահմանադրական սկզբունքը:

Նախ՝ անհրաժեշտ է վերլուծել վարկային միջոցների ներգրավման նպատակը, որը բացահայտվում է Համաձայնագրին կից Հավելված 1-ի 2-րդ կետով: Վերջինիս վերլուծությամբ արձանագրվում է, որ վարկային միջոցները ներգրավվում են հետևյալ նպատակներով.

1. կլիմայական, գենդերային հարցերի առումով պատասխանատու ներառական առողջապահական հաստատություններ՝ առողջապահական որակյալ ծառայությունների մատուցում (առողջապահական հաստատությունների նախագծման, կառուցման, վերանորոգման և սարքավորումների հագեցման միջոցով, որոնք համապատասխանում են կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության, ներառական նախագծման և գենդերազգայուն հարցերին արձագանքման չափանիշներին, որակյալ բնութագրերով առողջապահական հաստատությունների լիցենզավորում և ընտրված հեռավոր վայրերում հեռաբժշկության պիլոտավորում),

2. բժշկական օգնության և սպասարկման որակի համար կարողությունների և կազմակերպությունների ամրապնդում (ինստիտուցիոնալ կառուցվածք, առաջնորդություն, որակյալ բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների համար ֆինանսավորում և կարողությունների ապահովում, բժշկական օգնության որակի, էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավում և որակավորված բուժաշխատողների հասանելիության բարձրացում),

3. բուժսպասարկման որակի չափման և հաշվետվողականության ինստիտուցիոնալացում՝ բարելավելով բուժհաստատությունների կարողությունները, ամրապնդելով և ինստիտուցիոնալացնելով բուժսպասարկման որակի մոնիթորինգը և հաշվետվողականությունը և հրապարակելով բուժսպասարկման որակի ցուցանիշների և տվյալների տարեկան վերլուծությունները:

Գտնում եմ, որ ֆինանսական (վարկային) միջազգային պայմանագրի փոխշահավետության հիմնական ցուցիչներից մեկը միջազգային պայմանագրի նպատակն է, այսինքն՝ այն վերջնակետը, որին ուղղված են պետության կողմից ներգրավվող ֆինանսական միջոցները: Հետևապես՝ միջազգային պայմանագրի նպատակը պետք է ձևակերպվի այնպիսի որոշակիությամբ, որը թույլ կտա գնահատել ներգրավվող (վերադարձման ենթակա) ֆինանսական միջոցների՝ պետության համար առերևույթ շահավետությունն ու ծախսման արդյունավետությունը: Այլ կերպ՝ եթե ֆինանսական միջազգային պայմանագրի նպատակը սահմանված է անորոշ, ընդհանրական և (կամ) տարընկալումներ կամ տարամեկնաբանություններ հարուցող ձևով, խնդիր է առաջանում պետական վարկի ներգրավման շահավետության և նպատակահարմության առումով:

Սույն պարագայում հարաբերական որոշակիություն առկա է Համաձայնագրի՝ վերոթվարկյալ երկրորդ և երրորդ նպատակների մասերով: Մինչդեռ առաջին նպատակի մասով առկա է որոշակի անորոշություն թե՛ եզրույթների իրավաբանական ձևակերպման և թե՛ ամրագրված նպատակների բովանդակության առումներով:

Նախ՝ ըստ էության բացահայտված չեն առողջապահական հաստատությունների՝ կլիմայական և գենդերային պատասխանատվության, ինչպես նաև ներառա-

կանության հատկանիշները, ինչի արդյունքում հստակ չեն ո՛չ ի սկզբանե ընտրված ծախսման ուղղությունների և ո՛չ էլ ֆինանսավորման հետագա արդյունավետության գնահատման չափանիշները:

Արդյունքում՝ թեպետ առկա է վստահության կանխավարկած առ պետության սահմանադրական պոզիտիվ պատասխանատվություն և որոշակի վստահություն վարկառու միջազգային բանկի բարի համբավի հանդեպ, սակայն բոլոր դեպքերում Համաձայնագրով վարկային ֆինանսավորման ընտրված նպատակի իրավաբանական ձևակերպման և բովանդակային համարժեքության չպահպանման պայմաններում (գերազանցապես վերոթվարկյալ առաջին նպատակի մասով) ստվերվում է Սահմանադրության 13-րդ հոդվածով հռչակված՝ արտաքին քաղաքականության փոխշահավետության սկզբունքի կիրարկումը:

Մտահոգիչ եմ համարում Համաձայնագրի 1-ին հոդվածի «գ կետով» վարկային ծրագրի կատարման համար որպես պատասխանատու մարմին Ծրագրի իրականացման գրասենյակի ճանաչումը, որը, ըստ էության, ձևավորվում և գործում է Համաձայնագրով սահմանված ֆինանսական հոսքերը տնօրինելու և ուղղորդելու համար՝ ըստ սահմանման, ապահովելով վարկային մասհանումների նպատակաուղղված ծախսն ու անհրաժեշտ արդյունքների գրանցման ուղղությամբ համակարգումը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվողականությունն ու թափանցիկությունն ինչպես վարկատուի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ ի դեմս, մասնավորապես, Առողջապահության նախարարության: Մինչդեռ, վերջինս օրենսդրորեն ունի անհրաժեշտ իրավասություն՝ իր կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներով ապահովելու Համաձայնագրով նախատեսված ծրագրային միջոցառումների իրականացումը: Փոխարենը՝ Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծմամբ վարկային միջոցների մի մասն ուղղվելու է այդ գրասենյակի աշխատակազմի պահման վարչական ծախսերին, գրասենյակի պահպանմանն ուղղված վարչական և կապիտալ ծախքերին այն դեպքում, երբ Ծրագրի իրականացման գրասենյակի գործառույթները կրկնորդելու են Առողջապահության նախա-

ռարության օրենսդրական գործառույթները, ինչն իմաստազուրկ և չհիմնավորված ծախսատար է դարձնում դրա ստեղծումը:

Անշուշտ, ասվածը չի նշանակում բացասական կանխավարկածի կիրառում Ծրագրի իրականացման գրասենյակի գործունեության նկատմամբ: Միևնույն ժամանակ, Համաձայնագրի նպատակների արդյունավետ գործիքայնացումը ևս փոխշահավետության սահմանադրական սկզբունքի շարունակական և հետևողական իրացման գրավականներից մեկն է: Այլ կերպ՝ Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության համար շահավետությունը կարող է որոշվել դրա նպատակների և վերջիններիս իրացման երաշխիքների համադրման արդյունքում, երբ նշյալ երկու բաղադրիչներն ունեն հավասար նշանակություն:

Խնդրահարույց է նաև Համաձայնագրի «լեզուն», մասնավորապես՝ օգտագործվում են ոչ միանշանակ իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող եզրույթներ, ծրագրային բաղադրիչներն ու ֆինանսական փոփոխականները շարադրված են աղյուսակների ձևով՝ մատրիցային բովանդակությամբ, ինչը բնորոշ է առավելապես հաշվապահական հաշվառման և աուդիտորական փաստաթղթերին, սակայն չի կարող կազմել միջազգային պայմանագրի բովանդակային առանցքը:

Նշյալի կապակցությամբ հարկ եմ համարում ընդգծել, որ Համաձայնագրի լեզվական առանձնահատկությունները և, մասնավորապես, տեքստի դյուրըմբռնելի լինելն էական նշանակություն ունեն Համաձայնագրում տեղ գտած պարտավորությունների սահմանադրաիրավական համարժեք մեկնաբանման համար: Վերջինս պատշաճ իրացնելու համար Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր դատավոր, նախ՝ պետք է իր համար բացահայտի Համաձայնագրի նորմատիվ բովանդակությունը և դրանից հետո միայն այդ իմաստը պարզաբանի հանրությանը՝ իրավական մեկնաբանման և իմացաբանության համարժեք մեթոդաբանության կիրառմամբ ընդունվող դատական ակտի ձևով:

Սրանով է պայմանավորված նաև իրավական որոշակիության սկզբունքի համակողմանի կիրառման անհրաժեշտությունը, որի թերի կենսագործումը կարող է հանգեցնել տվյալ դեպքում միջազգային պայմանագրի տեքստի միանշանակ ընկալման

խնդիրների, որոնց հետ հետևանքային ազդեցությամբ կապված է միջազգային պայմանագրի շահավետությունը պայմանադիր պետության համար:

Անշուշտ, վերոշարադրյալը որևէ կերպ չպետք է ընկալվի որպես Համաձայնագրի հակասահմանադրականության վերաբերյալ ձևավորված դիրքորոշում: Համաձայնագիրը բավարարում է սահմանադրականության նվազագույն պահանջները, սակայն վերջինիս՝ սահմանադրաիրավական իմաստով խնդրահարույց կողմերի վրա իրավաստեղծի և իրավակիրառի ուշադրությունը բևեռելը Սահմանադրական դատարանի և վերջինիս դատավորների սահմանադրական առաքելության ծավալում ընդգրկված հանձնառություն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ **Ս. ՍԱՖԱՐՅԱՆ**

24 հունիսի 2025 թվականի